

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԱԳԻԿ ԿԱՐԱՊԵՏԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ

**ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԵՐԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ
ԱՐԵՎՄՏՅԱՆ ՍՈՑԻՈԼՈԳԻԱՅՈՒՄ XX ԴԱՐԻ ԵՐԿՐՈՐԴ ԿԵՍԻՆ**

**ԻԲ 00.01 - «Սոցիոլոգիական հետազոտությունների մեթոդաբանություն,
տեսություններ, սոցիալական տեխնոլոգիաներ և գործընթացներ» մասնագիտությամբ
սոցիոլոգիական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման
ատենախոսության**

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ-2021

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի պետական համալսարանում

Գիտական ղեկավար՝

փիլիսոփայական գիտությունների դոկտոր
պրոֆեսոր Ա.Ե.Մկրտիչյան

Պաշտոնական ընդդիմախոսներ՝

սոցիոլոգիական գիտությունների դոկտոր,
պրոֆեսոր Մ.Ի.Զասլավսկայա

սոցիոլոգիական գիտությունների թեկնածու,
դոցենտ Յ.Գ.Մելքումյան

Առաջատար կազմակերպություն՝

Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն-
Հայաստան (CRRC-Armenia)

Ատենախոսության պաշտպանությունը տեղի կունենա 2021 թվականի հունիսի 23 - ին,
ժամը 15.00-ին, Երևանի պետական համալսարանում գործող՝ ՀՀ ԲՈԿ-ի 013
մասնագիտական խորհրդի նիստում:

Մասնագիտական խորհրդի հասցեն՝ 0025, Երևան, Արուսյան 52 ա, ԵՊՀ:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ Երևանի պետական համալսարանի
գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2021 թվականի մայիսի 14 - ին:

Մասնագիտական խորհրդի
գիտական քարտուղար՝



փիլ.գիտ.թեկնածու, դոցենտ
Գ. Ա. Սողոմոնյան

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հետազոտության թեմայի արդիականությունը: Քաղաքացիական հասարակության (այսուհետ՝ ՔՀ) գաղափարը սկսած Անտիկ Հունաստանից մինչև մեր օրեր մեծ հետաքրքրություն է ներկայացնում հասարակական կյանքի փոխակերպումներով և զարգացման հնարավորություններով հետաքրքրվող մտածողների, հանրային գործիչների և մասնագիտական տարբեր հանրույթների համար:

ՔՀ գաղափարի զարգացումը, պայմանավորված լինելով տվյալ պատմական ժամանակահատվածի հասարակագիտական մտածողությամբ, գաղափարախոսական հոսանքներով, սոցիալ - մշակութային դրսևորումներով, գիտելիքի արժեքավոր աղբյուր է: ՔՀ գաղափարն, ավանդաբար իմաստավորվելով ժողովրդավարական դրսևորումների համատեքստում, մեծ հետաքրքրություն է առաջացնում նաև ժողովրդավարացման մեխանիզմների ուսումնասիրության տեսանկյունից:

ՔՀ թեմայի շրջանակներում իրականացված հետազոտությունները ցույց են տալիս, որ XX դարի երկրորդ կեսն ընդգրկող ժամանակահատվածում ՔՀ արևմտյան հայեցակարգերի զարգացումը չի հիմնվում ընդհանուր տեսության վրա և աչքի է ընկնում մեկնաբանումների ամբիվալենտությամբ: Այս ամբիվալենտությունը մի կողմից պայմանավորված է ՔՀ հայեցակարգման հարցում տարբեր պատճառականությունների գոյությամբ (մշակութակենտրոն, քաղաքակենտրոն, տնտեսակենտրոն, հասարակական), մյուս կողմից գաղափարաբանական տարբեր մոտեցումներով (հատկանշելի են ազատական և էտատիստական մոտեցումները):

Այդուհանդերձ ՔՀ շուրջ առաջարկվող մեկնաբանումներն, անկախ իրենց բազմազանությունից, համընկնում են որոշ ընդհանրությունների առումով: Հիշյալ ընդհանրությունները, եթե ստույգ չեն սահմանում, ապա գոնե ուրվագծում են ՔՀ տեսականացման շրջանակները, ըստ որի ՔՀ-ը իրենից ներկայացնում է հարաբերությունների ոլորտ, որը զատելի է պետական վարչարարության, տնտեսական և մասնավոր ոլորտներից: Սա իր հերթին նշանակում է, որ ՔՀ -ը վերապահվում է այնպիսի հասարակական դերակատարում, որը չի իրականացվում տնտեսական, քաղաքական և մասնավոր ոլորտների կողմից: Ինչ վերաբերում է նշված դերակատարմանը, ապա այս հարցում ևս առաջ են գալիս բազմատեսակ մեկնաբանումներ՝ ՔՀ դերի շուրջ վիճարկումներն ընդլայնելով տեղային, համայնքային բարեփոխումներից մինչև ընդհանուր հասարակական փոփոխություններ:

Վերոնշյալից բխում է, որ ՔՀ համատեքստում առաջարկված հայեցակարգերի սոցիոլոգիական ուսումնասիրությունը սկզբունքային նշանակություն ունի, ինչպես ՔՀ զարգացման մեխանիզմների հասկացման, այնպես էլ XX դարի երկրորդ կեսն ընդգրկող ժամանակահատվածում տեղ գտած հասարակական փոխակերպումների բազմակողմանի վերլուծելիության և հասարակական կյանքի կազմակերպման արդյունավետ մեխանիզմների մշակման գործում:

Ատենախոսական հետազոտության օբյեկտը և առարկան:

Հետազոտության օբյեկտը XX դարի երկրորդ կեսին տեղ գտած ԲՀ արևմտյան հայեցակարգերն են:

Հետազոտության առարկան XX դարի երկրորդ կեսի ԲՀ արևմտյան հայեցակարգերի ձևավորման և զարգացման դիսկուրսային մեխանիզմներն են:

Ատենախոսական հետազոտության հիմնական վարկածը:

XX դարի երկրորդ կեսին ԲՀ արևմտյան հայեցակարգերի զարգացումը պայմանավորված է ոչ միայն սոցիալ-պատմական գործոնների ազդեցությամբ, այլ նաև միջտեքստային մեխանիզմներով, որոնք դրսևորվում են ԲՀ և հարակից դիսկուրսների հաղորդակցության համատեքստում:

Հետազոտության նպատակը և խնդիրները:

Ատենախոսության նպատակն է դուրս բերել XX դարի երկրորդ կեսի արևմտյան ԲՀ հայեցակարգերի զարգացման դիսկուրսային դրսևորումները: Նշված նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները՝

- Վերլուծել XX դարի երկրորդ կեսն ընդգրկող ժամանակահատվածում տեղ գտած ԲՀ գաղափարի զարգացման հիմնական տեսական ավանդույթները.

- Դուրս բերել XX դարի երկրորդ կեսի արևմտյան ԲՀ հայեցակարգերի սոցիալ-պատմական համատեքստի յուրահատկությունները.

- Դուրս բերել ԲՀ հայեցակարգումների հիմնական դիսկուրսային տարրերը.

- Դուրս բերել ԲՀ հասկացության համակարգի տարրերը և դրանց հարաբերակցման միջտեքստային դրսևորումները.

- Վերհանել ԲՀ դիսկուրսի զարգացման յուրահատկությունները գլոբալացման համատեքստում.

- Վերհանել ԲՀ դիսկուրսի զարգացման դրսևորումները վերազգայնության համատեքստում:

Թեմայի տեսական հիմքերն ու գիտական մշակվածության աստիճանը: ԲՀ վերաբերյալ քննարկումներն, անկախ իրենց սկզբնավորման վաղեմությունից, շարունակում են արդիականացվել հասարակագիտական լայն համատեքստում: ԲՀ գաղափարի շուրջ ձևավորված գիտելիքի հիմքերը նախանշվում են քաղաքացիականության վերաբերյալ Անտիկ Հունաստանում ձևավորված մոտեցումներով: Այս շրջանակներում շատ են քննարկվում Արիստոտելի քաղաքացիության վերաբերյալ հայացքները, որտեղ քաղաքացիական հասարակությունը հայեցակարգվում է քաղաքական հասարակության վերաբերյալ ձևավորված ըմբռնումների տեսակետից:

XVII դարում ԲՀ վերաբերյալ տեսական գիտելիքները ձևակերպվում են բնական օրենքի հարացույցի շրջանակներում, որն ընկած էր պետության նորմատիվ կառուցվածքների հիմքում: Դրանք իրենց արտացոլումն են գտնել XVIII դարի մտածողների, մասնավորապես Ջոն Լոքի աշխատություններում: Հասարակական դաշինքի վրա հիմնված

ՔՀ պատկերացումները հետագայում զարգացվել են Շոտլանդական լուսավորականության ներկայացուցիչների (Դ.Հյում, Ա.Սմիթ, Ա.Ֆերգյուսոն) կողմից: Լուսավորական շրջանի մտածողության շրջանակներում ուշագրավ տեղ են զբաղեցնում գերմանացի մեծանուն փիլիսոփա Իմանուիլ Կանտի հումանիստական գաղափարները, որտեղ որպես առաջնահերթություն հեղինակը շեշտադրում է համընդհանուր իրավական ՔՀ կերտման կարևորությունը՝ սահմանագիծ անցկացնելով քաղաքացիական հասարակության և պետության միջև:

Քաղաքացիական հասարակության արդի պատկերացումների ձևավորման տեսանկյունից անկյունաքարային է համարվում Գեորգ Հեգելի դերակատարումը, որի պատկերացումները ամբողջանում են վերջինիս «Բուրժուական հասարակություն» հայեցակարգում:

Հեգելի մեկնաբանումներում քաղաքացիական հասարակությունը հետևողականորեն տարանջատվում է պետությունից՝ մոտենալով ՔՀ ժամանակակալից նոր-ազատական ըմբռնումներին: Այնուհետև, Մարքսն, ի հակադրումն հեգելյան վերացարկումների, ՔՀ վերաբերյալ իր մոտեցումներում ելնում է պատմական փորձի վերլուծությունից: Այդուհանդերձ, տեսաբաններից շատերը Ա. Թոքվիլի մեկնաբանումներում են տեսնում հեգելյան գաղափարների զարգացումը: Թոքվիլը ՔՀ-ը վերլուծում է որպես մի ոլորտ, որտեղ մարդիկ միավորվում են, ընկերակցություններ ձևավորում սեփական կարիքները ինքնակազմակերպման միջոցով հոգալու համար: ՔՀ հայեցակարգման մյուս խոշոր տեսական ուղղությունը, որը բնորոշվում է բախումնաբանական մոտեցումներով, զարգացվել է նոր-մարքսիստական տեսակետների հիման վրա: Այս համատեքստում հիմնարար նշանակություն ունեն իտալացի տեսաբան Անտոնիո Գրամշիի մոտեցումները:

XX դարի երկրորդ կեսի ՔՀ հայեցակարգերում կանխորոշիչ դերակատարում են ունեցել Յ.Հաբերմասի ՔՀ նորմատիվային մոտեցումները, որում ՔՀ նշանակությունը վերլուծվել է ՔՀ և քաղաքական ինստիտուտների միջև կոնսենսուսային հարաբերությունների ձևավորման շրջանակներում: ՔՀ և ժողովրդավարական տեսության սինթեզման դաշտում ուշագրավ են Ռ. Փաթենի աշխատությունները, որտեղ ՔՀ արդիականացվում է ներքևից զարգացվող ժողովրդավարության և սոցիալական կապիտալի ձևավորման դրսևորումների տեսանկյուններից: ՔՀ կազմակերպման կոլեկտիվ, ընկերակցային դրսևորումների զարգացման տեսանկյունից ուշագրավ են Մ.Էդվարդսի մոտեցումները:

XX դարավերջին ՔՀ հայեցակարգային զարգացումը վերլուծվում է Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի երկրներում դրևստրված հակակոմունիստական շարժումների համատեքստում: Մասնավորապես, հետկոմունիստական ժողովրդավարությունների պայմաններում նկատված ՔՀ դրսևորումները հայեցակարգվել են մի շարք անվանի հեղինակների հայտնի աշխատությունների համատեքստում (Է. Արատո, Զ. Կոհեն,

Ջ.Ալեքսանդր, Ա. Միխնիկ, Ս. Զալեսկի): ՔՀ արդի տեսաբան Ջ.Ալեքսանդրի աշխատություններում ևս մեծ տեղ է հատկացվում հետխորհրդային հասարակություններում ՔՀ զարգացման հիմնախնդրին: Հատկանշական է Ջ. Ալեքսանդրի ՔՀ հայեցակարգումը մշակութակենտրոն դիսկուրսների վրա հիմնված նորմատիվային տիպարի դերում: ՔՀ հետխորհրդային հայեցակարգումների շրջանակներում ուսումնասիրվող խնդրին անդրադարձել է նաև Հ.Հովհաննիսյանը, ով իր աշխատություններում ՔՀ հայեցակարգերը վերլուծում է էտատիստական և լիբերալ մոտեցումների տեսանկյունից: Ժովորդավարական զարգացման և սոցիալական փոխակերպումների համատեքստում ուշագրավ են ՔՀ տարբեր դրսևորումների հետազոտմանը նվիրված Ա.Իշխանյանի աշխատությունները: Իշխանյանի աշխատություններում հատկանշական են ՔՀ կազմակերպությունների և նորագատական գաղափարախոսության փոխազդման դրսևորումները, և այս շրջանում առաջ եկած արդի հիմնախնդիրները:

XX դարի վերջին տասնամյակից սկսած մեծ հետաքրքրություն են ձեռք բերում ՔՀ հայեցակարգերի ուսումնասիրությունները գլոբալացման և վերազգայնության համատեքստում: Այս տեսանկյունից ուշագրավ են Ջոն Ուրիի տեխնոկենտրոն մոտեցումները, որում ՔՀ համաշխարհայնացումը կապվում է երթուղային միջոցների ընձեռած հնարավորությունների և դրանց հետևանքով նկատվող անհատական նոր հատկանիշների ձևավորման հետ: Նշված շրջանակներում ՔՀ գաղափարը մշակվել է նաև Ա. Լեֆեվրի տարածության վերարտադրման հայեցակարգի շրջանակներում, որտեղ ՔՀ նշանակությունը քննվում է համաշխարհայնացում - ուրբանիզացիա, աշխարհ-քաղաք հետզհետե նույնականացող տարածությունների հայեցակետից:

Համաշխարհայնացման գործընթացների համատեքստում զգալի ներդրում ունի արդի տեսաբան Յ.Ա.Շյոլտեն, ով իր վերլուծություններում ՔՀ գաղափարը մեկնաբանում է ինքնիշխանության, ինքնության, քաղաքացիության, ժողովրդավարության դիտանկյուններից: Վերազգային ՔՀ ուսումնասիրություններում կարևոր տեղ են զվաղեցնում Ա.Ֆլորինիի հետազոտությունները, որտեղ հեղինակը մի շարք հիմքեր է նախանշում վերազգային ՔՀ հայեցակարգի լեգիտիմացման համար:

Հետազոտության մեթոդաբանական հիմքերը:

Մեթոդաբանության շրջանակներում աշխատանքում օգտագործվել են համեմատական վերլուծության և դիսկուրս վերլուծության մեթոդները: Համեմատական վերլուծության մեթոդի շրջանակներում հիմք են ծառայել դեպքի վրա կենտրոնացած համեմատական մարտավարությունները, որոնք բնորոշ են համեմատական վերլուծության որակական ուղղվածությանը (ի տարբերություն փոփոխականների վրա կենտրոնացած քանակական մոտեցումների): Այս մեթոդի կիսողությունը թույլ է տալիս որոշակի դեպքերի համեմատական վերլուծությամբ դուրս բերել ՔՀ սոցիալ-պատմական դրսևորումների պատճառական մեխանիզմներն ու ծագումնային առանձնահատկությունները, ինչպես նաև հայեցակարգել դրանք տիպաբանական տարբեր մոդելների շրջանակներում: Դիսկուրս

վերլուծության կիրառման նպատակահարմարությունը պայմանավորված է դիկտուրսի և սոցիալական փորձառությունների փոխկապվածության վրա հիմնվող պատկերացումներով: Ընդորում, ընտրված մեթոդաբանությունը, առավելապես կողմնորոշված լինելով դեպի քննադատական դիսկուրս վերլուծության գործիքակազմը և հասկացութային համակարգը, ի տարբերություն դիսկուրս վերլուծության լեզվագիտական և նշանագիտական մոտեցումների, առաջին հերթին ուշադրություն է դարձնում այս կամ այն դիսկուրսի դրսևորման համատեքստին, կամ այլ կերպ ասած դիսկուրսի սոցիալական պայմանավորվածությանը: Այս շրջանակներում օգտվել ենք Զ. Ռուիզի դիսկուրսների սոցիոլոգիական վերլուծության մեթոդաբանությունից, որի համաձայն ՔՀ հայեցակարգերը վերլուծվել են երեք մակարդակով. այն է՝ տեքստային մակարդակ, համատեքստային մակարդակ, սոցիոլոգիական մեկնաբանման մակարդակ: Մյուս կողմից հաշվի են առնվել ՔՀ տեսությունների զարգացման յուրահատկությունները դիսկուրսային մարտավարությունների տեսանկյունից: Այս մոտեցմանը զուգահեռ օգտվել ենք նաև Ն.Ֆերկլոյի քննադատական դիսկուրս վերլուծության գործիքակազմից, որում առաջարկված միջտեքստային վերլուծության մեթոդակարգը անհրաժեշտ հիմք է ապահովել դիսկուրսների փոփոխման և նոր դիսկուրսների առաջացման մեխանիզմների վերլուծության համար:

Ատենախոսական հետազոտության գիտական նորույթը:

1. Ընտրված ժամանակաշրջանում ձևավորված ՔՀ հայեցակարգերի ուսումնասիրմամբ առաջարկվել է վերջինիս սոցիալ-պատմական զարգացումը մոդելավորող եռափուլ մեթոդաբանական սխեմա:

Մասնավորապես ՔՀ հայեցակարգումների յուրահատկությունները պատմական առումով ներկայացվել են երեք՝ հետպատերազմական (Երկրորդ համաշխարհային), հակակոմունիստական, հետխորհրդային շրջափուլերի, իսկ սոցիալական առումով՝ համապատասխանաբար նորմատիվացման, ժողովրդավարացման և վերազգայնացման շրջափուլերով:

2. Ուսումնասիրվող ժամանակահատվածում ՔՀ գաղափարի զարգացումը դիտարկվել է սոցիոլոգիական միջին մակարդակի տեսությունների համատեքստում, ինչն ուշագրավ հայեցակետեր է (միգրացիայի և ինքնության) ապահովում ՔՀ հայեցակարգերի բազմակողմանի վերլուծության համար:

3. ՔՀ ժամանակակից իմաստավորումները վերլուծվել են գլոբալ հիմնախնդիրների տեսանկյունից.

ա) Ցույց է տրվել, որ արդի միգրացիոն ցանցերի միջոցով ՔՀ տեղային դրսևորումները յուրօրինակ հաղորդակցության մեջ են մտնում ՔՀ վերազգային կազմավորումների հետ:

բ) Միգրացիոն հիմնախնդրի և ՔՀ վերազգային հայեցակարգերի վերլուծության համատեքստում ուսումնասիրվել է «Բարի գալուստ փախստականներ» շարժման դիսկուրսը

և այս օրինակով ցույց է տրվել ՔՀ և վերազգային դիսկուրսների կապը, տարրորոշվել են ՔՀ դիսկուրսի արդի փոխակերպման միջտեքստային մեխանիզմները:

գ) «Covid 19» համավարակի պայմաններում առաջ եկած գլոբալ հիմնախնդիրների ուսումնասիրությամբ ցույց են տրվել ՔՀ կազմակերպման ներկայիս դրսևորումները և դրանց հայեցակարգային համատեքստը:

4. Դիսկուրսների միջտեքստային հարաբերակցման շրջանակներում առաջ է քաշվել ՔՀ վերլուծության հասկացության համակարգ, որի հիման վրա առանձնացվել են ՔՀ և վերջինիս փոխկապված ինստիտուցիոնալ ոլորտների հայեցակարգային տարբերություններն ու ընդհանրությունները:

5. Ցույց է տրվել ՔՀ դաշտում հասարակական և մշակութային կողմնորոշում ունեցող դիսկուրսների արդիականացման անհրաժեշտությունը, ի հակադրումն քաղաքական կողմնորոշում ունեցող պատկերացումների գերիշխող ազդեցությանը:

6. ՔՀ ներառական հնարավորությունների զարգացման ուղղությամբ մշակվել է դիսկուրսային երկակի համակարգերից բաղկացած ՔՀ քառակողմ նորմատիվային մոդել, որը մեթոդաբանական տեսանկյունից նոր հնարավորություններ է ստեղծում ՔՀ գաղափարի վերաիմաստավորման համար:

7. Ցույց է տրվել, որ միգրացիայի համատեքստում ՔՀ դիսկուրսը կազմակերպվում է առավելապես միգրանտների ինտեգրման գործընթացների տեսանկյունից, ուր ՔՀ դերակատարումը հայեցակարգվում է միգրանտների ներառական հիմնախնդիրների կարգավորման շրջանակներում: Հիմնավորվել է, որ այս պայմաններում ՔՀ-ը հայեցակարգվում է գլխավորապես հակակառավարական քննադատության և վերազգային համերաշխության դիսկուրսների վերարտադրման միջոցով:

Պաշտպանության ներկայացվող դրույթները:

1. XX դարի երկրորդ կեսին ՔՀ հայեցակարգերի զարգացումը պայմանավորված է սոցիալ-պատմական երեք ալիքներով:

2. XX դարի երկրորդ կեսին ՔՀ հայեցակարգերում գերակշիռ տեղ է հատկացվում ՔՀ վերլուծությանը ՔՀ – «Երրորդ սեկտոր» գաղափարների շաղկապման համատեքստում, որի հետևանքով ՔՀ հայեցակարգվում է քաղաքական և տնտեսական ինստիտուտների հետ հարաբերակցման տեսանկյունից, ինչը սահմանափակումներ է ստեղծում ՔՀ ավելի ընդգրկուն մեկնաբանումների համար:

3. ՔՀ արևմտյան պատկերացումները աչքի են ընկնում հայեցակարգային ամբիվալենտությամբ (հատկանշելի են ծախսական և նորմատիվային ավանդույթների սկզբունքային տարբերությունները): Ըստ այդմ ՔՀ հայեցակարգերի զարգացումը հնարավոր չէ վերլուծել մեկ ընդհանրական գաղափարաբանության շրջանակներում: Հետևաբար ՔՀ վերաբերյալ ֆունդամենտալիստական մոտեցումների բյուրեղացումը հակասության մեջ է մտնում ՔՀ հայեցակարգերի զարգացման տրամաբանության հետ:

4. Քաղաքական դիսկուրսի գերակայությունից դուրս ՔՀ իմաստավորումը (կամ դրա աշխարհիկացումը) կարևոր նախապայման է ՔՀ ինստիտուտների բազմակողմանի զարգացման և քաղաքական կտրուկ փոխակերպումներում ՔՀ կենսունակության պահպանման համար:

5. Գլոբալ հիմնախնդիրների հետևանքով փոփոխվում են ՔՀ կազմակերպման տարածական յուրահատկությունները, ինչն ուղեկցվելով ՔՀ և վերազգային դիսկուրսների փոխթափանցմամբ, հիմքեր է ստեղծում գլոբալ ՔՀ հայեցակարգերի զարգացման համար:

Ատենախոսական հետազոտության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը: Ատենախոսության տեսական նշանակության դիտանկյունից աշխատանքում ներկայացվել են XX դարի երկրորդ կեսի ՔՀ հայեցակարգային մոտեցումները: Այս մոտեցումների ուսումնասիրության հիման վրա ընտրված ժամանակաշրջանի ՔՀ տեսական հայեցակարգերը դասակարգվել են սոցիալ-պատմական փուլային մոդելում, ինչը հիմք կարող է հանդիսանալ հասարակագետների համար ոչ միայն բուն ՔՀ զարգացումը հասկանալու, այլ նաև հիշյալ շրջանի փոխակերպումները ՔՀ հայեցակարգերի և դիսկուրսների տեսանկյունից վերլուծելու համար: Մյուս կողմից աշխատանքի տեսական նշանակությունը պայմանավորված է ՔՀ տեսության շրջանակներում հետխորհրդային Հայաստանի ժողովրդավարացման փորձի և ընթացիկ զարգացումների հայեցակարգման անհրաժեշտությամբ:

Գործնական նշանակության տեսանկյունից աշխատանքը կարող է նպաստել ՔՀ արդի հայաստանյան դիսկուրսի վերաիմաստավորմանը, ՔՀ դաշտի հետ փոխկապված գլոբալացման և ժողովրդավարական գործընթացների նշանակության վերհանմանը, ինչպես նաև ՔՀ սոցիալական և մշակութային դերակատարման բարձրացմանը: Աշխատանքը ՔՀ արևմտյան հայեցակարգերի շուրջ առաջարկված տեսամեթոդաբանական մոտեցումներով կարող է ճանաչողական և վերլուծական հիմք հանդիսանալ սույն թեմայով հետաքրքրվող փորձագետների և ուսանողների համար:

Հետազոտական արդյունքների փորձարկումը:

Ատենախոսության հիմնական դրույթները և եզրահանգումները քննարկվել են Երևանի պետական համալսարանի սոցիոլոգիայի ֆակուլտետի տեսության և պատմության ամբիոնում: Ատենախոսության հիմնադրույթները տեղ են գտել թեմատիկ գիտաժողովներում և գիտական հրապարակումներում:

Ատենախոսության կառուցվածքը:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, վեց ենթագլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից: Ատենախոսության ընդհանուր ծավալը 122 էջ է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ներածությունում հիմնավորվել է հետազոտության թեմայի արդիականությունն ու ՔՀ հիմնախնդրի համատեքստում ձևավորված գիտելիքի որոշակիացման անհրաժեշտությունը: Ներածության մեջ ներկայացվել է հիմնախնդրի գիտական մշակվածության աստիճանը, հետազոտության օբյեկտը, առարկան, ուսումնասիրության տեսական և մեթոդաբանական հիմքերը, գիտական նորույթը, պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները, նպատակը և խնդիրները: Ձևակերպվել է հետազոտության տեսական և գործնական նշանակությունը, ներկայացվել է ուսումնասիրության արդյունքների փորձարկումը:

Առաջին գլուխը, որը վերնագրված է «Քաղաքացիական հասարակության հետազոտման տեսամեթոդաբանական հիմքերը» բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլուխը նվիրված է XX դարի երկրորդ կեսն ընդգրկող ժամանակահատվածում ձևավորված ՔՀ արևմտյան հայեցակարգերի վերլուծությանն ուղղված տեսամեթոդաբանական մոտեցումների և դրանց ընձեռած հետազոտական հնարավորությունների ներկայացմանը:

ՔՀ հայեցակարգային զարգացման ուսումնասիրություններում գործ ունենք մեկնաբանումների բազմազանության հետ, ինչը պայմանավորած է ՔՀ շուրջ առաջարկվող գիտելիքի ձևավորման սոցիալ-պատմական տարբեր համատեքստերով: Այս տեսանկյունից ՔՀ գաղափարի զարգացումը կարևոր է ուսումնասիրել տարբեր հասարակությունների և պատմական տարբեր ժամանակահատվածների համեմատական վերլուծության տեսանկյունից: Մյուս կողմից, երբ խոսք է գնում ՔՀ տեսական զարգացման մասին, սոցիալ-պատմական գործոններից զատ, մեր ուշադրության կենտրոնում են հայտնվում ՔՀ դրսևորումները հայեցակարգող տեքստային բովանդակությունները, որոնց շրջանակներում ՔՀ-ը ներկայանում է որպես դիսկուրսային փորձառությունների հաղորդակցման միջտեքստային տիրույթ: Այս տեսանկյունից, ՔՀ դիսկուրսը կարևոր է վերլուծել ՔՀ գաղափարի հետ փոխկապված հարակից հասկացությունների համատեքստում: Մասնավորապես, ուշագրավ են ՔՀ-երրորդ սեկտոր, ՔՀ- քաղաքական հասարակություն, ՔՀ-հանրային դաշտ, ՔՀ-սոցիալական շարժումներ, ՔՀ-ոչ կառավարական կազմակերպություններ (ՈԿԿ) ինստիտուցիոնալ զույգերի միջտեքստային հաղորդակցության ուսումնասիրությունը: Հիշյալ վերլուծական մոտեցումը հնարավորություն է տալիս մի կողմից հասկանալ ՔՀ նոր դիսկուրսների ձևավորման տեքստային մեխանիզմները, մյուս կողմից ՔՀ հայեցակարգի զարգացումը քննել տարբերակման սկզբունքի հիման վրա՝ հստակեցնելով ՔՀ հասկացությային շրջանակները:

Առաջին գլխի երկրորդ ենթագլխում քննարկվում են XX դարի երկրորդ կեսն ընդգրկող ժամանակահատվածում ՔՀ գաղափարի զարգացումը կանխորոշած անգլոամերիկյան և հետհեգելյան (կամ մարքսիստական) ավանդույթները:

Այս համատեքստում կարևորվում են արդի տեսաբան Ա. Սելիգմանի մոտեցումները, որոնց համաձայն ՔՀ գաղափարի զարգացման հարցում առանձնացվում են արևելաեվրոպական (ՔՀ շահերը ենթադասվում են պետության շահերին) և արևմտաեվրոպական (առաջնահերթությունը տրվում է ՔՀ ինստիտուտներին) ավանդույթները: Արևելյան Եվրոպայի երկրների փորձի վերլուծությամբ Սելիգմանը ցույց է տալիս սոցիալապես և պատմականորեն արմատացած գործոնների (հավատալիքներ, բարոյագիտական պատկերացումներ, փիլիսոփայական ավանդույթներ) կանխորոշիչ ազդեցությունը ՔՀ ձևավորման վրա:

Սոցիալ-պատմական տեսանկյունից XX դարի երկրորդ կեսն ընդգրկող ժամանակահատվածում ՔՀ հայեցակարգերի զարգացումը կապվում է Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած ժողովրդավարական փոխակերպումների հետ: Այս տեսանկյունից ուշագրավ են ՔՀ իմաստավորման բևեռային դրսևորումները, որոնք դուրս են բերվում Յ.Հաբերմասի՝ նորմատիվային և Մ.Ֆուկոյի բախումնաբանական մոտեցումների համեմատությամբ:

Այսպիսով, ՔՀ գաղափարի ուղղությամբ առաջարկված հակադիր մեկնաբանումների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ուսումնասիրվող ժամանակահատվածի ՔՀ հայեցակարգումներում կենտրոնական տեղ է զբաղեցնում ՔՀ և պետության փոխհարաբերման հիմնախնդիրը, որում ՔՀ զարգացման հետպատերազմյան (Երկրորդ համաշխարհային) շրջանը բնորոշվում է նորմատիվային դիսկուրսի գերակա ազդեցությամբ:

Երկրորդ գլուխը, որը վերնագրված է «Քաղաքացիական հասարակության հայեցակարգի զարգացումը ժողովրդավարության տեսության համատեքստում» բաղկացած է երկու ենթագլխից:

Առաջին ենթագլխում ներկայացվում է XX դարի վերջին տասնամյակներում սկզբնավորված հակակոմունիստական շարժումների դիսկուրսում ՔՀ գաղափարների և ժողովրդավարական սկզբունքների փոխկապվածությունը: ՔՀ արդի տեսաբաններ Է. Արատոն և Զ. Կոհենը, ՔՀ հայացակարգն ուսումնասիրելով ժողովրդավարական տեսության շրջանակներում, առաջարկում են ՔՀ հայեցակարգման եռակողմ մոդել (*Քաղաքական հասարակություն - ՔՀ - Տնտեսական հասարակություն*)¹, որի միջոցով կարևորվում է ՔՀ ընդդիմադիր դերակատարումը միապետական, կենտրոնաձիգ վարչակարգերի նկատմամբ, ինչպես նաև ՔՀ քննադատական ներուժի պահպանման հնարավորությունը ազատականացման և ժողովրդավարացման պայմաններում:

Հիշյալ մոդելի շրջանակներում վերլուծելով Ֆրանսիայի, Գերմանիայի և արևելաեվրոպական երկրների դիսկուրսներում արտահայտված ժողովրդավարացման նախագծերը և այս համատեքստում ձեռնարկված ՔՀ հայեցակարգման փորձերը՝

¹Տե՛ս **Kohen J., Arato A.**, Civil Society and Political Theory, Cambridge, MA/London: MIT Press, 1992, 6-9 էջ:

ի ցույց են դրվում ՔՀ դաշտում նոր-պահպանողական և նոր-ազատական գաղափարախոսությունների գերակայությամբ պայմանավորված հիմնախնդիրները:

Զ.Ալեքսանդրն իր հերթին անդրադառնալով արևելաեվրոպական երկրների (մասնավորապես Ուկրաինայի) հետխորհրդային փորձին, ՔՀ դիսկուրսի շրջանակներում առանձնացնում է երկու հիմնական մոդել: Առաջինի դեպքում ՔՀ-ը հայեցակարգվում է որպես նորմատիվային տիպար, երկրորդ դեպքում վերջինս նույնացվում է իր ռեֆերենտ կառույցների գործունեության հետ (ՔՀԿ, ՈԿԿ, ՈՊԿ)՝ սահմանափակվելով գործիքային մեկնաբանումների դաշտում: Հեղինակը ՔՀ հետխորհրդային դիսկուրսի հիշյալ բևեռացումը կապում է քաղաքացիության սոցիոմշակութային հիմքերի բացակայության հետ, որում ՔՀ-ը չի կայանում որպես քաղաքացիական մշակույթի վերարտադրման ինքնավար դաշտ:

Այս տեսակետների համաձայն ՔՀ միջոցով ժողովրդավարական ինստիտուտների ամրապնդումը առաջարկվում է դիտարկել մշակութափոփոխ դիսկուրսների վրա կառուցված ՔՀ նորմատիվային տիպարի շրջանակներում:

Երկրորդ ենթագլխում քննարկվում են ՔՀ դիսկուրսի «ապաքաղաքական» (*չանտեսելով քաղաքականության վրա ազդեցության մեխանիզմների պահպանման կարևորությունը*) մոտեցումները: Այս համատեքստում կարևորվում է ավելի կենսունակ և ներառական ՔՀ կերտման հնարավորությունը, որը մի կողմից կապահպանի իր կառուցվածքային և գործառույթային ինտերգվածությունը քաղաքական տեղաշարժերի պայմաններում, մյուս կողմից հնարավորություն կստեղծի ՔՀ հասարակական և մշակութային դիսկուրսների արդիականացման համար: Այս դեպքում հիմք են հանդիսանում Զ. Ալեքսանդրի «քաղաքացիական և հակաքաղաքացիական» հակամետ դիսկուրսների ներքո կազմակերպվող բինար կողերի համակարգերը, որոնք հեղինակը բաշխում է ՔՀ երեք բաղադրիչների (*շարժառիթներ, ինստիտուտներ, փոխհարաբերություններ*) միջև²: Ի լրումն հիշյալ բաղադրիչների, կարևորվում է ՔՀ ազատական-ժողովրդավարական մոտեցումների վրա հիմնված չորրորդ դիսկուրսային համակարգի ներառումը, որի միջոցով քաղաքացիական և հակաքաղաքացիական երկակի կողերի տարրոռշումն առաջարկվում է իրականացնել նաև սկզբունքահենք (*ինքնօգնություն, մասնակցություն...*) և արժեքահենք (*համերաշխություն, բազմակարծություն...*) դիսկուրսների տեսանկյունից:

Սկզբունքահենք և արժեքահենք երկակի կողերի ավելացումը հնարավորություն է ստեղծում առավել լայն ծածկույթով մշակել ՔՀ դիսկուրսում դրսևորվող հաղորդակցությունները՝ միաժամանակ ընդլայնելով ՔՀ նորմատիվային չափումները: Մյուս կողմից առաջարկված մոդելը միջտեքստային հաղորդակցության մեխանիզմներ է ապահովում ՔՀ և ազատական-ժողովրդավարական դիսկուրսների միջև՝ թույլ տալով ՔՀ կառուցվածքային, գործառույթային, դիսկուրսային փորձառությունները կազմակերպել և

²Տե՛ս Alexander J., The civil sphere, Oxford University Press, 2006, էջ 57-59:

վերլուծել ազատական - ժողովրդավարական սկզբունքների վրա հիմնված նորմատիվ տիպարի շրջանակներում:

Երրորդ գլուխը, որը վերնագրված է «Քաղաքացիական հասարակության վերազգային հայեցակարգերը» բաղկացած է երկու ենթագլխից:

Երրորդ գլխի առաջին ենթագլխում ներկայացվում են հաղորդակցային տեխնոլոգիաների և շարժունության նոր մեխանիզմների զարգացման հետևանքով XX դարի վերջին տասնամյակում արդիականություն ձեռք բերած ՔՀ գլոբալիստական մոտեցումները: Այս համատեքստում ՔՀ նշանակության վերահիմաստավորումը թույլ է տալիս առանձնացնել երկու մոդել: Առաջին մոդելի համաձայն ՔՀ –ը հանդես է գալիս որպես գլոբալացման գործընթացների արտացոլման և վերլուծման ինքնատիպ հարթություն: Երկրորդ մոդելի շրջանակներում ՔՀ-ը վերլուծվում է ըստ գործառության նշանակության՝ դիտվելով որպես գլոբալացման գործընթացների առաջխաղացման մեխանիզմ:

Ինստիտուցիոնալ տեսանկյունից գլոբալ ՔՀ հասկացությունը օգտագործվում է որպես սոցիալական հարաբերությունների զարգացման մի մակարդակ, որն ընդունում է այնպիսի ձևեր, ինչպիսիք են միջազգային ոչ պետական կազմակերպությունները, վերազգային ոչ ֆորմալ ցանցերը, շահերի պաշտպանության խմբերը և վերազգային սոցիալական շարժումները:

Ա.Լեֆեվրը համաշխարհայնացման գործընթացների համատեքստում անդրադառնում է քաղաքային տարածության տարասփռման հիմնախնդրին: Այս շրջանակներում հեղինակը խոսում է համաշխարհային քաղաքային հասարակության ձևավորման մասին, ինչը նպաստում է համաշխարհայնացված տարածությունում կապիտալիստական հարաբերությունների վերարտադրությանը: Ըստ այդմ, տարածության արդի փոխակերպումների տեսանկյունից առանձնակի կարևորություն է տրվում ՔՀ ինստիտուտների զագրացմանը, որպես պետության կողմից քաղաքային տարածության մենաշնորհման հակակշիռ:

Ջ. Ուրին ՔՀ գլոբալացումը կապում է շարժունության նոր տիպերի առաջացման և ԶԼՄ-ների դաշտում դիտվող տեղեկատվական նոր հնարավորությունների հետ: Միաժամանակ Ուրին գլոբալ ՔՀ համատեքստում կարևորում է համաշխարհային քաղաքացիությանը բնորոշ էթիկական նոր սկզբունքների ձևավորումը:

Համաշխարհայնացման մեկ այլ տեսաբան Ա.Շյոլտեն ՔՀ արդի նշանակությունը վերլուծում է «Երրորդ սեկտոր» հասկացության ներքո ենթադրվող ինստիտուցիոնալ դրսևորումների տեսանկյունից՝ տարանջատելով այն պետական համակարգի ֆորմալ բաղադրիչներից և շուկայական դաշտում գործող շահույթ հետապնդող կազմակերպություններից:

Վերջինս համաշխարհայնացման մարտահրավերների պայմաններում գլոբալ ՔՀ կազմակերպությունների դերը վերլուծում է նյութական բարեկեցության պահպանման, քաղաքացիական կրթության, ձայնի տրամադրման, քննարկումների ծավալման,

քաղաքականության թափանցիկության և հաշվետվողականության աճի խթանման գործառույթների տեսանկյունից:

Հիշյալ մոտեցումներից ելնելով կարող ենք նշել, որ համաշխարհայնացման արդի գործընթացների պայմաններում հարցադրվում են ազգ-պետություն շրջանակներում առաջարկվող ԲՀ մեկնաբանումները, որոնց համաձայն ԲՀ-ը ավանդապես հայեցակարգվել է որպես առանձին երկրների հասարակական կյանքի կազմակերպման ինստիտուցիոնալ մեխանիզմ և հաղորդակցային դաշտ, որը ֆորմալ մակարդակում կարգավորվում է տվյալ պետության օրենսդրական նորմերով: Այսպիսով, ի հակադրումն ազգային պետության գաղափարաբանության վրա հիմնված ԲՀ ըմբռնումներին, XX դարի վերջին տասնամյակներից սկսած ԲՀ հայեցակարգման գլոբալիստական մոտեցումները նկատելի թափ են ստանում:

Երրորդ գլխի երկրորդ ենթագլխում ներկայացվում են գլոբալացմամբ պայմանավորված համալիր փոխակերպումները, որոնք ենթադրում են տեխնոլոգիական առաջընթացի վրա հիմնված նոր կառուցակարգերի զարգացում (վիրտուալ հանրույթներ, վերազգային ցանցեր), ինչն իր հերթին էապես ազդում է *տարածության և տեղի* նշանակության վերաբերյալ ձևավորվող ընկալումների վրա:

ՎԲՀ հայեցակարգի լեգիտիմացման հարցում հատկանշական են Ա.Ֆլորինիի մոտեցումները: Ուսումնասիրելով ԲՀ զարգացումը վերազգայնության հարացույցի շրջանակներում՝ վերջինս դուրս է բերում վերազգային ԲՀ կազմակերպությունների արդյունավետությանը նպաստող մի շարք հանգամանքներ. այդ թվում՝ տեղային ԲՀ-ն կայուն առաջխաղացումը, տեխնոլոգիական նորամուծությունները և խարսխման կետերի (միջազգային կառույցներ, ՄԱԿ) աճը, որոնց շուրջ վերազգային ԲՀ ցանցերը միավորման հնարավորություն են ստանում: Ֆլորինիի առաջարկած ԲՀ մոդելի համաձայն վերազգային ցանցային կառուցվածքների հուսալիությունը կապվում է տեղային քաղաքացիական հասարակությունների կենսունակության հետ:

Մյուս կողմից տեղային և վերազգային գործընթացների կապն արտացոլվում է վերջին տարիներին դրսևորված համաշխարհային մարտահրավերներ պարունակող մի շարք տիպական դեպքերի (փախստականների ճգնաժամ, Քովիդ 19) շուրջ ծավալվող ԲՀ դիսկուրսում: Հիշյալ մարտահրավերների համատեքստում ԲՀ դիսկուրսն արդիականացվելով տեղային դրսևորումներից անդին՝ համալրվում է վերազգային դիսկուրսի տարրերով:

Ատենախոսության եզրակացությունում կատարվել են հետևյալ հիմնական եզրահանգումներն ու առաջարկությունները

1. Ատենախոսության հիմնախնդրի շրջանակներում բնութագրվել են XX դարի երկրորդ կեսն ընդգրկող ժամանակահատվածում առաջ եկած ԲՀ հայեցակարգերի և դրանց դիսկուրսային տարրերի հիմնական առանձնահատկությունները: Դրանց հետազոտման հիման վրա առանձնացվել է ԲՀ հայեցակարգերի տիպաբանման

մեթոդաբանական մոտեցում, որի միջոցով հիշյալ հայեցակարգերի զարգացումը վերլուծվել է ՔՀ և սոցիալ-պատմական դրսևերումների հարաբերակցության համատեքստում:

Ընտրված շրջանակներում ՔՀ հայեցակարգերի համեմատությունը թույլ է տվել դուրս բերել քաղաքացիական հասարակության արևմտյան հայեցակարգերի զարգացումը մոդելավորող եռափուլ մեթոդաբանական սխեմա: Այս տեսանկյունից առաջ քաշված եզրահանգման համաձայն ՔՀ հայեցակարգման առաջին փուլը կամ առաջին ալիքը պատմական առումով սկիզբ է առնում Երկրորդ համաշխարհային պատերազմին հաջորդած ժողովրդավարացման գործընթացներով: Սոցիալական առումով այս ալիքն աչքի է ընկնում ՔՀ նորմատիվային հայեցակարգերի արդիականացմամբ:

Երկրորդ ալիքը պատմական տեսանկյունից արտահայտվում է արդեն XX դարի վերջին տասնամյակներում թափ առած «հակակոմունիստական» շարժումներով, իսկ սոցիալական առումով ՔՀ հայեցակարգերի ձևավորումը մեծապես կապվում է ժողովրդավարական և ազատական օրակարգերի հետ:

Երրորդ հայեցակարգային ալիքը պատմական համատեքստի արտացոլվում է հետկոմունիստական ժողովրդավարացումներով (ազատ շուկայական հարաբերությունների զարգացում, նոր-ազատական օրակարգերի արդիականացում): Սոցիալական առումով այս ալիքը բնորոշվում է հասարակություն-պետություն սահմաններից դուրս ՔՀ վերազգային և գլոբալացման հայեցակարգերի առաջխաղացմամբ: Այլ կերպ ասած այս ալիքով ՔՀ տեղային պատկերացումներին գալիս են փոխարինելու գլոբալացման գործընթացներով պայմանավորված մոտեցումները:

2. Ատենախոսության շրջանակներում ՔՀ դիսկուրսի և հարակից դիսկուրսների համեմատության և տարբերակման միջոցով ցույց է տրվել, որ ՔՀ հայեցակարգերի զարգացման հիմքում ընկած են, ոչ միայն պատմական, հասարակական գործընթացներն ու դրանց տեսական ձևակերպումները, այլ նաև միջտեքստային հաղորդակցության դիսկուրսային մեխանիզմները: Հիշյալ դրույթի օգտին են խոսում ՔՀ իմաստավորումները նորմատիվային տիպարի համատեքստում, որտեղ ՔՀ-ը հանդես է գալիս դիսկուրսների հաղորդակցման միջոցով ձևավորվող ինքնատիպ կառույցի դերում: Այլ կերպ ասած ՔՀ-ը դիտվում է, ոչ միայն որպես հասարակական գործընթացների կազմակերպման կամ արտացոլման հարթություն, այլ նաև դիսկուրսային նախագծերի ձևավորման և վերարտադրման ինքնատիպ տիրույթ:

Այս դեպքում ՔՀ նշանակությունը դառնում է ոչ այնքան հասարակական փոխակերպումներին արձագանքելը, այլ նոր որակի հարաբերությունների կերտումը, կամ այլ կերպ ասած սոցիալական իրականության մշակութահենք փոփոխությունը:

3. Քննադատական դիսկուրս վերլուծության շրջանակներում ուսումնասիրելով ՔՀ դիսկուրսի գաղափարախոսական բեռնվածությունը՝ եզրակացվել է, որ ՔՀ արդի հայեցակարգերի համաձայն ՔՀ և մյուս սոցիետալ ոլորտների կապը (պետական և տնտեսական ոլորտ) միջնորդավորված է գլխավորապես ազատական-ժողովրդավարական

ըմբռնումներով և կազմակերպվում է վերջինիս դիսկուրսային համատեքստում: Այդուհանդերձ, հետխորհրդային ժողովրդավարությունների փորձի վերլուծությամբ ցույց է տրվել, որ ՔՀ դիսկուրսի առաջխաղացումը ժողովրդավարական մոտեցումների համատեքստում միշտ չէ, որ աչքի է ընկնում բավարար արդյունավետությամբ: Ընդորում, հիշյալ հիմնախնդրի պատճառները ոչ միայն ընկած են ՔՀ շրջանակներից դուրս, այլ նաև պայմանավորված են ՔՀ դիսկուրսին ներհատուկ որոշ սահմանափակումներով:

Ի թիվս նշված սահմանափակումների առանձնացվել է ՔՀ դիսկուրսի կախյալությունը քաղաքական իրադրություններից, ինչը հաճախ քաղաքական կտրուկ փոխակերպումների ազդեցության պայմաններում հանգեցնում է ՔՀ դիսկուրսի դեգրիտեզմանը: Մյուս հիմնախնդիրը, որը նկատվում է ՔՀ դիսկուրսի համատեքստում, ՔՀ հասկացությանի տարրերի մանիպուլյատիվ կիրառություններն են, որոնց շրջանակներում ՔՀ դիսկուրսը զրկվում է իր փորձառական բովանդակությունից, որի հետևանքով կասկածի տակ է դրվում, ոչ միայն ՔՀ սուբյեկտային դերը ժողովրդավարացման գործընթացում, այլ ՔՀ լեգիտիմությունն առհասարակ:

Աշխատանքում ցույց է տրվել, որ ժողովրդավարական սկզբունքների համաձայն ՔՀ դիսկուրսի կազմակերպումը լրացուցիչ իմաստավորումների կարիք ունի, ինչը տեսական համալրումներից զատ ենթադրում է նաև մեթոդաբանական նոր մոտեցումներ: Այս մոտեցումների առանցքում ՔՀ-ը իմաստավորվում է նորմատիվային տիպարի դերում, որի դիսկուրսային բաղադրիչները պետք է կազմակերպվեն ազատական-ժողովրդավարական հիմնադրույթների համաձայն: Այս առաջնահերթությունից ելնելով՝ հիմնավորվել է, որ սվյալ մեթոդաբանական մոտեցումը, հիմնվելով ներառականության սկզբունքի վրա, քաղաքական կողմնորոշումներից զատ պետք է նախատեսի նաև մշակութափոխ մոտեցումներ:

4. Անդրադառնալով XX դարի երկրորդ կեսում տեղ գտած ՔՀ հասարակագիտական մեկնաբանումներին՝ եզրակացվել է, որ դրանք առաջ են գալիս քաղաքական և տնտեսական (պետության և բիզնեսի) դաշտերի հետ հարաբերակցման համատեքստում (կամ այլ կերպ ասած Երրորդ սեկտոր-ի պատկերացումների շրջանակներում): Այս միտման համաձայն ՔՀ հայեցակարգվելով ինստիտուցիոնալ, կազմակերպչական դրսևորումների տեսանկյունից՝ անհրաժեշտ ուշադրություն չի դարձնում մասնավոր ոլորտի և ՔՀ հարաբերակցությանը, ինչպես նաև ամենօրյա, համայնքային հիմնախնդիրների հաղթահարման համատեքստում ՔՀ նշանակությանը:

5. XX երկրորդ կեսում տեղ գտած քաղաքացիական հասարակության արևմտյան հայեցակարգերը ձևավորվել են սովորաբար քաղաքական տեսության շրջանակներում (անկախ վերջին տասնամյակներին նկատվող որոշ տեղաշարժերի): Սա որոշակիորեն սահմանափակել է ՔՀ բացատրական և վերլուծական ներուժը սոցիոլոգիական տեսանկյունից: Մասնավորապես ՔՀ հայեցակարգի հիմքում ընկած սկզբունքների (բազմակարծություն, կամավորականություն, ինքնակազմակերպում, ընկերակցություն) տեսանկյունից միգրացիոն, ինքնութենական, համայնքային, առօրեական հիմնախնդիրների

միջտեքստային վերլուծությունը նոր հնարավորություններ կստեղծեր այս երևույթներն ավելի լավ հասկանալու համար:

Քաղաքական տեսությունից անդին ՔՀ դիսկուրսի սոցիոլոգիական վերլուծություններում ուշագրավ տեղ է զբաղեցնում ինքնության հայեցակետը: Մասնավորապես համայնքային հարաբերությունների տեսանկյունից ՔՀ դերակատարման ուսումնասիրությամբ ցույց է տրվել, որ այս պարագայում քաղաքացիական ինքնության դիսկուրսի զարգացումը կարող է նպաստել ընդհանուր պատկանելության վրա հիմնված համերաշխային ձևերի վերարտադրությանը:

6. Ներկայիս գլոբալ մարտահրավերների պայմաններում մի կողմից Ֆիզիկական տարածության սահմանափակումները, մյուս կողմից թվային տեխնոլոգիաների զարգացումը ՔՀ փորձառությունները տեղափոխում են առցանց, վիրտուալ տարածություն: Նման դեպքերում գործ ունենք ՔՀ ինստիտուտների վերակազմակերպման և հետևաբար՝ ՔՀ դերի վերաիմաստավորման հետ: Ըստ այդմ աշխատանքում ցույց է տրվել, որ ՔՀ հայեցակարգերի զարգացման ընթացիկ իրադրությունն աչքի է ընկնում տեղային և գլոբալ դիսկուրսների համադրությամբ:

Վերազգայնության համատեքստում ՔՀ ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ արդի միգրացիոն ցանցերի միջոցով ՔՀ տեղային դրսևորումները յուրօրինակ հաղորդակցության մեջ են մտնում ՔՀ վերազգային հանգույցների հետ: Հետևաբար ՔՀ վերազգային կազմավորումները կարող են նշանակալի դեր ունենալ ՔՀ տեղային դրսևորումների վրա:

Մյուս կողմից տեղային համայնքների կյանքում ՔՀ սուբյեկտների ներգրավվածության մակարդակից է կախված ՔՀ վերազգային կազմավորումների գործառության արդյունավետությունը: Մասնավորապես, ատենախոսությունում ցույց է տրվել, որ նման պայմաններում ՔՀ դիսկուրսը կազմակերպվում է առավելապես միգրանտների ինտեգրման հիմնախնդիրների տեսանկյունից, ուր ՔՀ դերակատարումը հայեցակարգվում է միգրանտների ներառական հիմնախնդիրների կարգավորման շրջանակներում: Մյուս կողմից, հիմնված լինելով միգրացիոն հիմնախնդիրների դրսևորման վերազգային մեխանիզմների վրա, ՔՀ դիսկուրսը նորովի է արդիականացվում՝ միջտեքստային հաղորդակցության մեջ մտնելով վերազգային դիսկուրսի տարրերի հետ:

Ատենախոսության հիմնական դրույթներն արտացոլված են հեղինակի հետևյալ հրապարակումներում.

1. Թումանյան Գ., «Հայաստանի քաղաքացիական հասարակության դիսկուրսի զարգացման մեթոդաբանական հայեցակետը», ԵՊՀ, Բանբեր համալսարանի, 3(30), 2019, էջեր 3-9 :
2. Թումանյան Գ., «Փախստականների ինտեգրման հիմնախնդիրները եվրոպական քաղաքացիական հասարակության դիսկուրսում», ԵՊՀ, Բանբեր համալսարանի, 1(25), 2018, էջեր 47-53:
3. Туманян Г., «Особенности концептуализации гражданского общества в Постсоветской Армении», Социальные технологии исследования, 2018,5(91), էջեր 79-85:
4. Туманян Г., «Гражданское общество как субъект организации регионального социального капитала в Армении», Череповецкий государственный университет, 2018, էջեր 170-177:
5. Թումանյան Գ., «Քաղաքացիական հասարակության արդի հայեցակարգերը ժողովրդավարացման դիսկուրսի համատեքստում», ԵՊՀ, Բանբեր համալսարանի, 2(23), 2017, էջեր 3-10:
6. Թումանյան Գ., «Civil society and security in the modern world: from theory to practice», Անվտանգության հիմնախնդիրները ժամանակակից հասարակություններում, ԵՊՀ հրատ., 2016, էջեր 283-290:
7. Atanesyan A., Mkrtchyan A., Tumanyan G., «Some Aspects of Functioning of the Armenian Migratory Networks (On the Study of Local Communities in Armenian Regions)», Armenians around the World: Migration and Transnationality. 2015, Peter Lang, էջեր 49-65:
8. Մկրտչյան Ա., Թումանյան Գ., Աթանեսյան Ա., Զասլավսկայա Մ., «Հայկական միգրացիոն ցանցերի ձևավորման և գործառնման որոշ հարցեր», Երևան, ԵՊՀ հրատ., 2015:

Туманян Гагик Карпетович

РАЗВИТИЕ КОНЦЕПЦИИ ГРАЖДАНСКОГО ОБЩЕСТВА В ЗАПАДНОЙ СОЦИОЛОГИИ ВТОРОЙ ПОЛОВИНЫ XX ВЕКА

Диссертация на соискание ученой степени кандидата социологических наук по специальности 22.00.01 - «Методология, теории социологических исследований, социальные технологии и процессы».

Защита состоится 23-го июня 2021 года в 15:00 на заседание специализированного совета Философии и социологии 013 ВАК РА, по адресу: 0025, г. Ереван, ул. Абовяна, 52а, Ереванский государственный университет.

Резюме

Изучая концептуализации гражданского общества (отныне ГО) второй половины XX века в западной социологии, можно вывести ряд определяющих моментов. В первую очередь мы приходим к выводу, что развитие идеи ГО взаимосвязано с действующими социально-историческими факторами, и под влиянием этого по-разному легитимировалось в разных контекстах своего становления. В этой связи следует подчеркнуть, что интерпретации понятия ГО не базируются на общей теории, и с концептуальной точки зрения отличаются амбивалентностью.

На основании упомянутых выводов в работе рассматриваются три основных социально-исторических этапа концептуализации ГО. Первый своим историческим контекстом связан с процессами, начавшимися после Второй мировой войны, и отражается в становлениях конституциональной демократизации. В социальном контексте на данной стадии развитие ГО отличается нормативизацией, что отражается в формировании основных институтов и ассоциативных принципов ГО, а также в развитии нормативного дискурса вокруг понятия.

Вторая волна дальнейшего развития ГО определяется социально-историческим контекстом антикоммунистических движений, которые демонстрировались в последних десятилетиях XX века. В этой стадии концептуализации ГО в основном связываются с демократическими повестками, часто смыкаясь с либеральным дискурсом.

Начиная с последнего десятилетия XX века, в западных концепциях ГО чувствуется воздействие трансформации, связанной с посткоммунистическими демократизациями. В социальном плане эта стадия, основанная на технологическом прогрессе и глобализации, отличается переосмыслением ГО за пределами национального государства, что, в свою очередь, способствует развитию транснационального дискурса ГО.

Между тем, при изучении дискурса ГО в рамках соотношения с ассоциированными понятиями (*общественная сфера, политическое общество, социальные движения и т.д.*), мы подразумеваем интертекстуальные механизмы соотношения, иными словами, диалогичность этих дискурсов, которые играют существенную роль в новых синтезах вокруг концепции ГО. В частности, на основании критического дискурс-анализа мы приходим к выводу, что развитие идеи ГО определяется не только социально-историческими факторами, но и интертекстуальными механизмами дискурсивных практик.

Учитывая упомянутые механизмы развития ГО на основании демократических норм и культурных составляющих, в работе предлагается развитие ГО рассматривать вне политического дискурса, способствуя этим расширению ассоциативного и интегративного потенциала понятия. В работе показывается, что такой подход одновременно служит основой для социологизации понятия ГО, вследствие чего роль ГО можно рассматривать в контексте глобальных проблем современности (в частности, в рамках актуальных проблем мобильности, миграции и идентичности).

Gagik Karapeti Tumanyan

**DEVELOPMENT OF CIVIL SOCIETY CONCEPTIONS IN WESTERN SOCIOLOGY IN THE
SECOND HALF OF THE 20TH CENTURY**

Dissertation submitted for receiving academic degree of the doctor of sociology under the speciality 22.00.01 – “Methodology, theories of sociological research, social technologies and processes”.

The public defense of the dissertation will take place on June 23, 2021, at 15:00 at the session of SCC «Philosophy and Sociology» Specialized Council 013 based in Yerevan State University.

Address: 0025, Yerevan, 52a Abovyan St., YSU

Summary

Based on exploration of conceptualization of civil society (CS) in western sociology during the second half of the 20th century, a number of important inferences could be made. First of all, one could conclude that the development of the idea of CS is tightly interrelated with the existing socio-historical context. Hence, influenced by that context, it is being legitimized differently in different stages of its formation. Therefore, the interpretation of CS is not based on a general theory and is characterized by a conceptual ambivalence.

Considering the above-mentioned, this paper examines three main socio-historical stages of the conceptualization of CS. In its historical context, the first stage is associated with the processes that followed the Second World War and influenced the formation of constitutional democratization in different European countries. In its social context, the development of CS in this stage is characterized by establishment of rules, manifested in founding of basic institutions and associated principles of CS, as well as in development of the normative discourse around the concept.

The second wave, which determines the further development of CS, is linked to the socio-historical context of anti-communist movements that took place during the last decades of the 20th century. At this stage of conceptualization, CS is mainly associated with democratic agendas, often merging with the liberal discourse.

Since the last decade of the 20th century, the impact of post-communistic democratic transformations has been observed on the processes of conceptualization of CS in western sociology. In social terms, this stage, characterized by technological progress and globalization, is distinguished by rethinking CS beyond the borders of a national state, which in its turn contributes to the development of a transnational discourse of CS.

Meanwhile, while studying the discourse of CS within the framework of correlations with the associated concepts (*public sphere, political society, social movements, etc.*), we assume inter-textual mechanisms of relations, in other words, the dialogical nature of these discourses,

which play a significant role for making new syntheses around the concept of CS. In particular, based on the critical discourse analysis, we come to the conclusion that the development of the idea of CS is determined not only by socio-historical factors, but also by inter-textual mechanisms of discursive practices.

Thus, considering the described mechanisms of the development of CS based on democratic norms and cultural components, this work suggests viewing the development of CS beyond the boundaries of a political discourse, thereby contributing to the expansion of the associative and integrative potential of the concept. The work demonstrates that this approach simultaneously serves as a basis for making the concept of CS “more sociological”, due to which the role of CS can be viewed in the context of the global problems of modernity (including mobility, migration and identity).

A handwritten signature in purple ink, appearing to read 'Pavel Stepanov', with a large, stylized initial 'P' and a horizontal line extending from the end of the signature.